ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «03» փետրվարի, 2017թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի № 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 28-Ա հրամանը, հաշվի առնելով «**ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀԱՍԵ ՌՆՆԹ 2016**» միջազգային մրցույթին ներկայացված հայտերի գնահատման նպատակով մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստի 2016 թ. նոյեմբերի 22-ի N 2 արձանագրությունը, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Թեմի առաջնորդի 2017 թ. փետրվարի 1-ի թիվ 013 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից անցկացվող հայագիտական հետազոտությունների նախագծերի աջակցության «**ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀԱՍԵ ՌՆՆԹ 2016**» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ՝ Ռուզան Ասատրյան)՝

1) մրցույթի արդյունքների մասին տեղեկացնել գիտական ծրագրերի ղեկավարներին,

2) կազմակերպել գիտական ծրագրերի ղեկավարների հետ պայմանագրերի կնքումը:

3. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ գիտական ծրագրերի ֆինանսավորումը սկսել 2017 թ. մարտի 1-ից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2017 թ. փետրվարի 3-ի
N 08-Ա հրամանի

Ց Ա Ն Կ

«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀԱՍԵ ՌՆՆԹ 2016» մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների

Հ/հ	Ծրագրի ղեկավար	Ծրագրի ծածկագիր	Վերնագիր
1.*	Աղասյան Արարատ Վլադիմիրի	ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ	Հայ երաժիշտների, նկարիչների և ճարտարապետների գործունեությունը Ղրիմում
2.	Սահակյան Արծրունի Սամվելի	Երևանի պետական համալսարան	Ժողովրդաքրիստոնեական պատկերացումները Նոր Նախիջևանի հայոց կենցաղային մշակույթում
3.*	Սարգսյան Հովհաննես Լավրենտի	Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան	Հայկական ինքնության պահպանման և զարգացման մեխանիզմները՝ պատմական փորձ և արդի մարտահրավերներ
4.	Պետրոսյան Վահրամ Սամվելի	Երևանի պետական համալսարան	Քրդական գործոնն ու հայ-քրդական հարաբերությունները տարածաշրջանային զարգացումների համատեքստում (1992-2016 թթ.)
5.	Հակոբյան Հայկ Երջանիկի	ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Հայ քաղկեդոնիկների և Աղվանքի հիմնախնդիրն ակադեմիկոսներ Ն. Մառի և Հ. Օրբելու արխիվային նյութերում
6.*	Ենգոյան Աշոտ Փայլակի	Երևանի պետական համալսարան	Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությունը Ռուսաստանում ազգային ինքնության պահպանման և միջեկեղեցական համագործակցության համատեքստում

*-- *ֆինանսավորվելու է Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից*